ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

03.08.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Ռ.Մարգարյանը - մարզպետի տեղակալ
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Ղարսայանը, Մ.Խեչումյանը, Լ.Մաթոսյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանին և մարզպետի օգնական Հ.Հակոբյանին՝

1.1 Անհրաժեշտ և պարբերական հանդիպումներ կազմակերպել և բացատրական աշխատանքներ տանել Լոռու մարզի համայնքներում, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում ժամանակավոր բնակվող, Ղարաբաղից տեղահանված քաղաքացիների հետ՝ պարզաբանելով պետական բնակարանաշինական ծրագրերից օգտվելու կարգը և առաջարկել կոնկրետ ժամկետներում դրանից օգտվելու անհրաժեշտության և առավելությունների վերաբերյալ:

1.2 Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին արձակուրդների տրամադրման վերաբերյալ նախօրոք տեղեկացնել Լոռու մարզպետին:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝

2.1 Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների կատարման ուղղությամբ և յուրաքանչյուր շաբաթ ներկայացնել համեմատական հաշվետվություն ըստ համայնքների՝ նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ՝ աճման կամ նվազման ցուցիչով:

2.2 Ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզի համայնքներում տարբեր ծրագրերով ստացված կամ ձեռք բերված գյուղտեխնիկայի օգտագործման միջոցով ստացված եկամուտների վերաբերյալ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-08-03 18:04:12 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99